

մանքից ուղում էին պատահաններից իրանց վայր գցել, կարծելով, որ քարը ընկել է ուսումնարանի վրա: Այս տեսարանից տարաբան խումբ, ոտարորդի, գլխաբաց մարդ, կին լեզապատառ, և աղի արցունքով ուսումնարան վաղելով, ամեն ոք իր սիրելի դասակն էր որոնում: Մեծ չորհրդակալութիւն ուսուցիչներին, որոնք մեծ ջանք աւելն հանդարտեցնելու մանակներին և շատագին օգնելու ուշաթափներին, չոր խմբեցնելով և սրահելով ուշքի բերելով: Աշակերտները և աշակերտուհիք ցրվեցան իրանց տները, ի մեծ ուրախութիւն իրանց ծնողաց, նոցանից մի քանիսը և վարժուհի օր. Ն. Չիլինկարեանը մինչ այժմ հիւանդ պառկած են անկողնում: Եթէ անցեալ տարվայ նոյն տեղից ընկած քարերից երկու տան աւերակաց խորութիւնները չը լինէին (որոնց գոհ գնացին չորս հոգիք), որոնք բաւականին արգելեցին քարերի գլորմանը, այն ժամանակ ամբողջ թաղը կաւերվէր: Նոյն վտանգը այսօր թէ վաղը սպառնում է ուսումնարանին, եկեղեցուն, Առաջնորդարանին և 400 հոգի մանկանց: Ժողովուրդը այլ ևս իր զաւակներին վախճում է ուսումնարան ուղարկել, որ մի գուցէ հարկաւոր անող մանակները գոհ գնան ապաւածի կարկուտներին, և որ ամենացաւալին է կը դադարի զատառուութիւնը: Արեւմտ ստիպած պէտք է հեռանալ հաղարար ոսկիներով կառուցած ազգային եկեղեցուց, ուսումնարանից և առաջնորդարանից: Բայց արդեօք կարծո՞ղ լինին կանգնեցնել նրանց փոխարէն, այդ դեռ հարց է: Այսուամենայնիւ շեշտի փոքրագոյնը պէտք է ընտրել. ներկայ ուսումնարանը և եկեղեցին թէ և անհարմար չեն բոլորովին, սակայն անմատչելի են ամենքի այցելութեանը, և հեռավոր թաղերի երեխայքը առանց ուսումնարանի են մնում. մանաւանդ ձմրան սաստկութիւնը, զարնան և աշնան ցիխերը առաւել արգելք են յարուստանում, քան ձանաղարհի հեռավորութիւնը: Այժմ առ նուազն տեղւոյ աղքայինք երկու եկեղեցու պէտք ունեն, նոյնպէս և ուսումնարանների. յոսով ենք, որ բարեգործական և մարդասիրական ընկերութիւնը և հայ հասարակութիւնը կը մտաւայցեն և չեն զլանայ ձեռքից եկած դրամական թէ նիւթական օգնութիւնը հասցնելու ժողովրդի բարօրութեան և մատաղ սերնդի յառաջագիտութեան սուրբ գործին: Նոյն օրը այս ցաւալի դէպքին ներկայ էր և տեղւոյս գինեղալ նահանգապետ պ. Տօմիչը, որը յայտնի է իր բարեգործութեանը և արդարադատութեանը: Նա լաւ նկատելով, որ միջնաբերդի քարափի թաղի աները կենդանի մարդու գերեզմաններ են, առաջարկեց որ նրանք հեռանան նոյն թաղից, որի համար յոյս տուեց ուրիշ թաղում տեղ յատկացնել. բայց մի կէտ, որ անկարելի է համարում նրանց տեղափոխութիւնը, այն է՝ դարձեալ չբաւարարութիւնը. նրանք հողի իրանց օրական պարէնով են ապրում, իսկ տուն չեն ելու բո-

լորովին կարողութիւն չը կայ: Յոյս ունենք, որ նահանգապետ պ. Տօմիչի միջամտութեամբ կառավարութիւնը կօցնի նրանց նոր տներ կառուցանելու, ժամանակով հատուցանելու պարանոս-ժամառ:

Անցեալ շաբաթ երկու աղքատ հայ գիւղացիք կարծի մտաւայցում բքաբեր ձիւնից խեղդում են, որոնք գնացել էին հարեան գիւղը ցորեն բերելու: Առաւօտը նրանց գիւղիցը գտան գիւղից մէջ հեռու, իսկ ցորենով լիքը պարկերը թաղել էին ձիւնի տակ երեք այն յուսով, որ իրենք ազատվելուց յետոյ դային տանելու:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի մի վաճառական խնդրում է մեզ իր և իր մի քանի ընկերների կողմից յայտնել հասարակութեանը մեր լրագրի մէջ ապագրելով հետեւեալ առաջարկութիւնը: «Վաճառական, որ Արծրունի եղբայրների կալուածքը, որ գտնվում է Թիֆլիսի Գլխավոր փողոցի վրա, տեղերը կամ մնում են ծախել, Թիֆլիսի միջին գաղափարի մի քանի վաճառականներին մէջ ծնվել է հետեւեալ միտքը: Եթէ մի կապիտալիստ կարող է առնել կալուածքը, ինչի նոյն կալուածքը չէին կարող առնել մի քանի միջին կարողութեան տէր անձինք, կազմելով իրանց մէջ մի բաժանորդական (ակցիոներական) ընկերութիւն: Կարելի էր կազմել 100 անդամներից, կամ աւելի լաւ է աւել 100 ակցիոներներից բաղկացած մի ընկերութիւն, իւրաքանչիւրը դիցուք 6000 ռուբլ արժողութեամբ, այն պայմանով, որ ներկայ տարին բաժանորդները մտցնեն իրանց ակցիայի երրորդ մասը, այն է 2000 ռուբլ իւրաքանչիւրը, միւս տարի միւս երրորդ մասը և երրորդ տարին էլ վերջին երրորդ մասը: Այդպիսով կալուածքը ձեռք կը բերվի տեղերից նոյն իսկ առաջին տարին և բաժանորդական ընկերութիւնը երրորդ և երրորդ տարին միջոց կունենար կալուածքի վրա և դառնալու հանգցնել: Գործը հեշտացնելու համար կարելի էր առաջին տարին նոյն իսկ երրորդ մասի կէսը մտցնել: Գուցէ ակցիոներական ընկերութիւնը կազմվելով, ակցիոներին մի մասը իրանք տեղերը իրանց վրա վերցնէին, եթէ յօժար են: Գործը կարելի էր սկսել 30 կամ 40 անդամներից, բաւականանալով դարձեալ, մինչև ընկերութեան կազմակերպվելը և անդամների շատացնելը, եղած ակցիաներից իւրաքանչիւրի երրորդ մասով: Հասկանալի է, որ անդամներ կարող էին գրվել բացի Թիֆլիսցիներից, և զաւաճներում ապրողներն էլ:»

Ստացանք Բաֆֆիի յօդուհանի համար Կողմից 11 ռուբլ և Արմաւիրից 13 ռուբլ: Հասցրինք:

1/12 մասը: Բացի դրանից ծաղկել այլանդակում, տեղեկացնում է բաղմաթիւ մարդկանց, էլ չենք հաշվում ծաղկից յառաջացած կուրուքիւններն ու խլուքիւնները: Իսկ պատուաստի չորհուրէ, որ առհասարակ լաւ արդիւնք է յառաջացնում, երեք հարիւր պատուաստածներից միայն մէկը է մեռնում և հիւանդութեան ծանր տեսակն ևս վարատում է 30—40 մարդկանցից մէկին:

Սակայն, չը նայելով այս միտքի արական թուանշաններին, պատուաստի հին ձեռք չէր կարող բոլորովին յարմար միջոց համարվել, որովհետեւ նա չէ հեղացնում ծաղկի թոյնը, այլ աւելի շուտ տարածում է նրան մշակ մահ (կուրուքայ) միջոցով: Մի և նոյն ժամանակ, փոխադրած ծաղկից նոյնքան տարափոխիկ է որքան և բնականը, նա կարող է ընդունել թէ լաւ և թէ վատ յատկութեան տեսակներ: Ուրեմն, բաղմանում են վարակման պատճառները, ոտեղծվում են հիւանդութեան մշտական փոխադրողներ ու տարափոխիկ անտեր: Այդ պատճառով հարկաւորութիւն էր զգացվում գտնել մի այլ աւելի անվտանգ միջոց, ծաղկի հիւանդութեան առաջին առնելու համար: Այս պատեղ մինք հանդիպում ենք ծաղկով բռնված կովից վերցրած թարախով պատուաստուելու ձևին: Այսպէս, օրինակ, վիտալէն ասելով, մի սանաքրիտ գրվածքի մէջ պատահում է հետեւեալ խրատը. «Վեր առ դանակի ծաղկի՝ կովի ծաղկի հեղուկը, ծակիլ սուր ծայրով թեր արմուհի և ուսի մէջտեղում՝ մինչև որ արիւն երևայ: Հեղուկը՝ խառնվելով մարդու արիւն հետ կը յառաջացնէ ծաղկի հիւանդութիւն, որի պատճառ-

Շնորհակալութեամբ ստացանք պ. Լալինի «Династическій списокъ Хайкидовъ, въ исторіи Арменіи Моисея Хоренскаго»—Н. О. Эмина. Տպւած է Մոսկուայում ներկայ թիւն:

Շնորհակալութեամբ ստացանք պ. Արմենայի Սիւնիի գրվածքը «Կաթողիկոսական ընտրելիներ» ընտրելիների կենսագրութեամբ: Տպւած է Թիֆլիսում ներկայ թիւն, կրամարէնի օր տարանում: Գինը 15 կոպէկ է:

Հրատարակեցաւ և մեր խմբագրութեանն ուղարկեցաւ «Մանկավարժանոցի» № 1 մասը ամսի, ներկայ 1884 թ. խմբագիրն է Խորէն Հ. վարդ. Ստեփաննէ: Հրատարակում է Եջմիածնում Ամսագիրը մանկավարժական է, և առաջին համարը բաւական լաւ կազմված է:

Ներսիսեան հայոց ազգային հոգևոր գործունցի հոգաբարձութիւնը կարգադրել է կատարել հոգեանդիտ այս ապրիլ ամսի 15-ին, նոր կիրակի օրը, Յովսէփ Եփեսեանցի գերեզմանի վրա Վանայ եկեղեցու դռնում և 22-ին Աւետիք փրոր-յանցի գերեզմանի վրա ս. Նշան եկեղեցու դռնում: Արժանաշխատակ հանդուցեալները նուրիւն են Ներսիսեան գործունցին, առաջինը՝ մի նշանաւոր գումար և երկրորդը՝ մի արդիւնաւոր կալուածք:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Թիֆլիսի Նորաշէն եկեղեցու ս. Մարիամեան օրհորդաց գործընդ վարչութիւնը առ ժամանակ նշանակել էր աշակերտութիւնների ուսման համար փոքրիկ վարձ, որովհետեւ եկեղեցու կալուածքների արդիւնները պակասած էին, իսկ այժմ կալուածքների արդիւններին աւելանալու պատճառով հոգաբարձութիւնը հարկաւոր համարեց նորից յայտարարել, որ ուսման համար այս գործընդ այլ ևս ոչինչ չէ սահմանում:»

«ԿԱՅԿԱՅ» լրագիրը իր սեփական թղթակցից ստացել է Պետերբուրգից հետեւեալ հեռագիրը. «Աւետարական մանկութեան վերաբերեալ նոր կանոնագրութիւնը այս օրերս վերջացած է, տպված է և ուղարկված է մինիստրներին:»

Ս. Պետերբուրգից «ԿԱՅԿԱՅ» լրագրին հեռագրում են, որ ժողովրդական լուստարութեան մի-նիստութիւնը մտադրութիւն ունի աւելացնել հին իրիւնքների դասերի թիւը:

Ապրիլի 4-ին, ցերեկայէր երկու ժամին, որպէս հաղորդում են տեղական լրագիրները, Թիֆլիսի նահանգական դատարանի նախասենեակում երկու տասարդ իշխան վլադիմիր Սուրմաթով ապրճա-նակով վերադարձել իւրան Կոնստանտնուպոլի Մուխ-

րանսկուն: Իշխան Սուրմաթովին կալանաւորեցին դատարանի չիտովեան մէջ: Ասում են, որ այդ անցքի պատճառը կալուածական վէճն էր վերա-խելեալ երկու իշխանների մէջ:

«Գրեթե» լրագիրը լուկ է, որ տիկին Շիօնիկ կտակաւատարները հրաժարվեցան հանդուցեալի ցանկութիւնը կատարելուց: Այդ կտակաւատար-ները հրաժարվեցան նոյնպէս և այն մասից, որ պէտք է հանել նրանց տիկին Շիօնիկ կտակով: Իսկ յօդուտ ուսումնարանների հանդուցեալի թու-ղած նշանաւոր ժառանգութեան գործադրու-թիւնը ամբողջապէս յանձնել են նրանք քաղաքա-յին վարչութեանը:

«СВѢТЪ» լրագրում կարդում ենք. Պետերբուր-գի հայոց եկեղեցու հոգաբարձութեան մասնաժո-ղով ժողովեցաւ մարտի 25-ին: Ժողովի նա-խագահ ընտրվեցաւ այստեղի համալսարանի պրո-ֆէսոր Գ. Պատկանով: Բացելով նիստը, նա բա-ցատրեց ժողովի նախագահ և նշանակութիւնը, որից յետոյ խնդրեց ընտրութիւններն սկսել: Գուց-արկութեան առաջարկված անձանց թուում էին ժողովրդական լուստարութեան պ. մինիստր Ի. Գ. Գլեյնսով և ներքին գործերի նախկին մի-նիստը կոմս Մ. Տ. Լօրիս-Մէլքեով, բայց հաս-րակութիւնից մէկ մարդ յայտնեց, որ այդ ան-ձինքը չեն ցանկանում քուէարկվել: Այսպ քուէ-արկութեան նիւթարկելով՝ վարչութեան անդամ-ներ ընտրվեցան՝ Ն. Ս. Սամաթրեանց, ժողովր-դական լուստարութեան փոխ-դիրեկտոր Գ. Ա. Նելեանց, Կ. Եսաղուբով, Գրիգորով և Մալիբով: Համաձայն Բարձրագոյն հրովարտակի, նախագահ նշանակված է իշխան Արամէլիք-Ապարեյն:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը: «Պ. Պ. բա-րեգործների ուշադրութիւնն ենք դարձնում երեք մանուկ օրերի գրութեան վրա, որոնք մնացել են երկրորդ կարգի տեղեկագրիստ կոլէժիսի սեկ-րետար խման Կրիլօշեկի մահից յետոյ, որը, անցեալ աշնանը Գեօրգիւմիկից Նրեան տեղա-փոխվելով, թաղեց ձանաղարհին մոտեցուց վախ-ճանկած իր կնոջը և ապա, քննութեան տակ ընկնելով եկաւ իր զաւակներով Թիֆլիս (Կիր-պիւհայա փողոց, տուն Եսաթամանովի № 3.) իր հօր մօտ, որի ձեռքերի վրա ապրիլի 7-ին վախ-ճանկեցաւ սրտի պայթումից, մահից մի քանի ժամ առաջ տեղեկութիւն ստանալով իր գլխաւո-րից գործի դադարման մասին, որի պատճառով նա ութն ամիս տանջվում էր քննութեան տակ առանց որ և է միջոցների, կորցրեց կնոջը և վերջապէս ինքն ևս վաղաժամ և այդպիսի սիրտ պատառու հանգամանքներում գերեզման իջաւ, թողնելով օրերին ճակատագրի կտրելին:»

Նախնականից «Русскій Курьеръ» լրագրին

ցիլ դարձաւ: Դադլի պատուաստման գործի մէջ մասնակցութիւն ընդունեցին գրողներ, բանա-ստեղծներ, դուրս եկան պատուաստմանը նուրիւն բանաստեղծութիւններ:

Զաւանալի չէ ուրեմն, որ դեռ կենդանութեան միջոցին Ձէննէրի հոգակը տարածվեցաւ ամբողջ Եւրօպայում և ամեն կողմից շնորհակալութիւններ էին յայտնում նրան: Նրա եղբայրակիցները մի չքաղքամ կոխեցին նրա պատուին: Զանազան գիտնական ընկերութիւններ իրանց անդամակից ընդունեցին նրան: Ֆրանսիական ինստիտուտը դրեց նրա անունը իր օտարերկրեայ աղանակից-ների թուում. կատարինէ կայսրուհին պատուեց նրան մի շատ հրապուրելի նամակով և իբրեւ ըն-ծայ ուղարկեց նրան մի գեղեցկաչէն անդաման-դէպ մատանի: Վերջապէս, անգլիական պարլա-մէնտը՝ ճանաչելով Ձէննէրի գիտի նշանակութիւ-նը 30,000 ֆունտ ստերլինգ (մեր կուրսով աւելի քան 250,000 ռուբլ) ընծայ նշանակեց և ձայները բաղմութեամբ սրտից շնորհակալութիւն յայտնել երկրի կողմից: Քաղաքապետը և Լճուծի աղբիւրները մտաուցին նրան պատուաւոր քաղա-քացիութեան դիպլոմը, աղանաղով դարգարված թանկաւոր պատեանի (ФУТЛЯРЪ) մէջ: Բացի դը-րանից՝ նա տեսուչ էր նշանակված պատուաստ-ման առաջին ուսումնարանին մէջ: Եւրպատարե-տներումը արձաններ կանգնեցրեց նրան Անգլիա-յում և Ֆրանսիայում: Նշանաւոր գիտեր անդուն-րից շատ քչերն յաջողվել է այդպէս վարձատր-ված լինել:

(Կը շարունակվի)

դրում են հետևանքը. «Մայիսի 7-ին Նշմանում
պետք է կայանայ հայոց հոգևոր թեմերի բոլոր
պատգամաւորները ընդհանուր ժողովը ամենայն
հայրոց ծայրագոյն պատրիարք և կաթողիկոս ըն-
տրելու համար: Որպէս աշխարհական կանգնողատ
Նախնիներն և Բնաւորաբար թեմերը, որի մէջ
մասնակցութիւն ունենալով, մայիսի 7-ին Նշմանում կու-
ղերով Մոսկովայի կայսերական համալսարանի
պրոֆէսոր Ն. Ներսէսեանը, որը ընտրվել է
մարտի 25-ին Նախնիներում կայացած պատգա-
մաւորներ թեմական ժողովում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ո՛վ ՊէՏԻ Է ԼԻՆԻ ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԸՆՏՐՆԻՆ

Ազգային ժողովը պիտի վաղը Թուրքիոյ Հայոց կող-
մանէ ցոյց տայ կաթողիկոսական երկը ընտրվելու, որոց առաջինն անշուշտ պիտի նկատուի Թուրքի-
ոյ Հայոց առաջին ընտրվելու: Մենք չենք վարա-
նել յայտնել թէ՛ ամեն տեսակէաներով օգտակար
է ազգին որ այդ առաջին ընտրվելու լինի Պատ-
րիարք Ներսէս Սրբազանը:

Բազմաթիւ են այն պատճառները որք փախա-
քելի կրնան այսպիսի մի ընտրվելու: Այդ պատ-
ճառներուն մէջն էլ զխաւորներն կրնանք նշա-
նակել:

Գիտենք թէ կաթողիկոսի գործունէութեան զը-
խաւոր առաջնէն պիտի լինի Ռուսաստան,
դիտենք նաև որ կաթողիկոսի բարոյական գործու-
թիւնը սրբան մեծ լինի, այնքան աւելի արդիւնա-
ւոր կը լինի իւր պաշտօնավարութիւնը:

Արդ յայտնի է թէ Ներսէս Սրբազան ամենա-
մեծ համակրութիւն և սէր կը վայելէ Ռուսիոյ
մէջ, և Ռուսիոյ Հայք միշտ փորձով ասպացոյցած
են իրենց այս սէրը: Երբ մի այսպիսի անձնաւո-
րութիւն գտնուի Մայր-Աթոռոյ վրա, որուն
կանստն ամբողջ ժողովուրդը, աւելորդ է ըսել թէ
այսպիսի անձնաւորութիւն մը ամեն կերպով ազ-
րող է այդ ժողովուրդին վրա միշտ օգտակար և
գեղեցկութիւն մը ստանալ:

Ղրկենք ուրիշ անձնաւորութիւն մը. նա կարող
է ժամանակի, որպէս զի վայելէ այդ սէրը, այդ
համակրանքը, մինչդեռ Ներսէս Սրբազան ունի
բարոյական պատրաստ գրամազրկի մը, եթէ
կրնանք այսպէս ըսել:

Երկրորդ, Ներսէս Պատրիարք կարող եղաւ Հայ
ազգը համակրելի ընծայել ամեն ուրեք, և ինչ որ
լինի Ներսէս Սրբազանի շնորհման պաշտօնի, ա-
նոր փայլը կը ցայտէ համայն Հայ ազգին վրա:

Երրորդ, Ներսէս սրբազան ունենալով այլքան
մեծ համբաւ, ընտան է որ այդ համբաւը ներ-
գործէ նաև Աշմիածնայ Հայրապետական Աթո-
ռին վրա:

Չորրորդ, եթէ այժմ մեր քուէն զանաւոր Ներ-
սէս Պատրիարքին, շատ հաւանական է որ մեծ
գոտութիւններ ծագին մեր և Ռուսիոյ Հայոց
միջև, զանազան պատրուակներու ներքեւ, մինչ-
դեռ Ներսէս Սրբազանի անունը միացման գիծ մը
կը լինի մեր մէջ: Այս միակ պարագայն բաւա-
կան համոզիչ է՝ մեր առաջին ընտրվելու զՆերսէս
ընելու:

Հինգերորդ, միթէ թեմական գաղափար մը
չենք ընծայել աշխարհի երբ այն անձնաւորու-
թիւնը զոր այնքան սիրելիք, և որուն այնքան
հոգեւորական հետեւանք, արժանաւոր չը սկսելը
մեր եկեղեցական բարձրագոյն պաշտօնին: Այդ-
պիսի ընթացքով մը նաև հարուած մը տված չենք
լինել Ներսէս Պատրիարքի ասանամայ պաշտօ-
նավարութեան բոլոր կարեւոր արարքներուն:

Վեցերորդ, համարված պէտք է լինիք թէ, եթէ
հնար լինի Հայերն ի մի վայր հաւաքել, քուէից
ստուար մեծամասնութիւնն զՆերսէս պիտի նշա-
նակել կաթողիկոս Ամենայն Հայոց, այս աստի-
ճան ստույգ է թէ, Ազգին մեծամասնութեան
սիրտը Ներսէսի հետ է: Ուրեմն պէտք է միթէ
որ զՆերսէս մեր առաջին ընտրվելու չը ներկայե-
լով արհամարհանք հասարակաց կարծիքն: Ուղիւ լի-
նի թէ ծուռ, հասարակաց կարծիքն է որ կառաջնոր-
դէ խորհրդարաններուն, և Ներսէսի անունը կատարած
կը համարին իրենց պաշտօնն երբ ճշդիւ կը ներ-
կայացնեն իրենց ընտրողաց զգացումները:

Եօթներորդ, մենք չենք ըսել թէ բոլոր Թուր-
քիոյ և Ռուսիոյ հայ եկեղեցական մարմինոյն մէջ
միակ արժանաւոր եկեղեցականը Ներսէս Պատրի-
արքն է: Բայց կը պնդենք թէ ոչ մէկ եկեղեցա-

կան իւր անձնական և պաշտօնական երկրորդա-
նակեայ փորձառութեամբ, եկեղեցւոյ վիճակին վրա
այնչպիսի ճիշդ գաղափար մը կրցած է ստանալ,
որչպիսի Ներսէս Պատրիարքը: Արդ, աւելորդ է ա-
պացոյցանել թէ ամենայն Հայոց կաթողիկոսն
պահանջելի առաջին յատկութիւնն այսպիսի
թանկագին փորձառութիւնն ո՛րէ:

Տարակոյս չունինք թէ անկողնակալ Ներսէս-
իւնք բոլոր այս և նմանօրինակ նկատողութիւն-
ներն իրենց ամենայն կարեւորութեամբ պիտի կը-
ռեն, և ըստ այնմ պիտի տան իրենց քուէներն:
Ամենին պէտք է որ այսպիսի հանդիսաւոր պա-
րագայի մը մէջ անձնական կիրքերէ, սխալաւու-
թենէ և այլ գծով նկատուներէ ու հաշիւներէ
առաջնորդութիւն: Եկեղեցւոյն ճշմարիտ շահերը
միայն ընենք, և զանաւոր եւեթ առաջնորդ
ունենանք մեզ՝ ամենայն Հայոց կաթողիկոսին
ընտրվելու մեծ գործին մէջ:

(Արեւելք)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Daily News» քաղաքի փարիզի թղթակիցը
տեղեկութիւն տուցաւ այն խօսակցութեան մա-
սին, որ Բիսմարկ ունէր գերմանական ընթերցա-
ղի անդամներէն մէկը հետ Պրուսիայի գործերի
կառավարութիւնը թողնելու առիթով: «Ես 70
տարեկան եմ, ասեց Բիսմարկ:—Ես ջղային եմ և
ժամանակ չունեմ, որ կարողանամ զսպել ինձ:
Արեւելք կարծի եմ ևս ընդգիծակալ կուսակցու-
թեան կրքերով զբաղվել, երբ ևս պէտք է հետե-
ւած ամբողջ աշխարհի գործերին: Գերմանիան շա-
հեր ունի ամեն տեղ՝ Հռօմում, Մարսելում,
Վիեննայում, Պէշտում, Պետերբուրգում, փարի-
զում, Լոնդոնում, Նիւ-Եորքում, Վաշինգտոնում,
Տամպաուիում, Մէլբուրնում, Սինդնում, Կալկա-
ում և խաբարտում: Ես պէտք է հաշիւ տամ ա-
մեն բանի մասին, ինչ որ ուղղակի կամ անուղ-
ղակի վերաբերում է Գերմանիային: Առաջ կանց-
լէրը պէտք է միայն յարաբերութիւններ պահպա-
նել և եւրոպական զանազան պալատներին հետ:
Այժմ նա պէտք է յարաբերութիւններ ունենայ
արդիւնաբերական և ֆինանսական շրջանների
տուրքերի հետ: Կանցլերի պարտաւորութիւնն
ներքէ մինչև անդամ երկտասարդ մարդու ուժերից
բարձր են, և ևս չէի կարող կրել այդ ծանրու-
թիւնը, եթէ կայսրի մէջ ճշմարիտ օգնութիւն չը
գտնէի»:

—«National Zeitung» քաղաքի ասում է, որ
Բրէսլայում բազմաթիւ սոցիալիստներ են կաշա-
նաւորված:

—Ազգական քաղաքները հաղորդում են, որ
Մադրիդի բարձրագոյն դատարանը վաւերացրեց
այն դատաւիճումը, որով «El Porvenir» քաղաքի
խմբագիրը դատաւարված է ութամսեայ բան-
տարկութեան թաղաւորի անձի վրա յարձակվելու
պատճառով: Որպէս յայտնի է, վերջինիս վրա լրա-
գիրը Սորիլայի օրդանն էր: Ներկայումս Ազգա-
պետն ասան և ութ քաղաքները դատի են հն-
թարկված նոյնանման յօդուածներին համար:

—Լոնդոնից «Temps» քաղաքի գրում են, որ
Ֆէնի Գալի կալանաւորումը Բիքինթլիում մեծ
յուզմունք է յարուցել Լոնդոնում: Հաւատացնում
են, որ նրա գրգռանքներով գտնված դժոխային
մեքենաները լցված են ամբրիկական նիւթաթղթերով:
Նոյն «Times» քաղաքի այդ առիթով ասում է,
որ ամբրիկական օրէնքը անողը է յայտնվում գի-
նամակի կուսակցութեան ղեկին: Նա (օրէնքը) թղթ
է աստիճանից զբաղվել իրանց աւելի գործով
որի հետեւանքները ոչ թէ Ամբրիկայումն են և-
րևում, այլ արտասահմանում: Բոլոր կրթված պե-
տութիւնները պէտք է զբաղվեն այդ հարցով, ո-
րովհետեւ ամենքն էլ երբ և իցէ կը փորձեն այդ
համբերողութեան ծանր հետեւանքները: Բիքինթլի-
ում և Բիքինթլիումում կալանաւորված անձանց
ընտանքներում նշանաւոր դոկտորներն են
գտնված: Նրանք ապացուցանում են, որ այն
դատաւորութիւնը, որի մէջ իրանք մասնակցում են
չափ նշանաւոր է: Փնտրվում շատ խիստ է
կատարվում: Սպասում են նոր և բազմաթիւ կաշա-
նաւորումներին:

—Հոմից «Standard» քաղաքի գրում են, որ
գոյնա Մարգարիտան, զոն-Կարթաի կինը, Հռօմի
ի վերջին ցացեղութեան ժամանակ չընդունվեցաւ
պապից, որովհետեւ Վատիկանը չէր կամենում ան-
բաւականութեան պատճառ գաւառի և զրգու-
նի:

Ազգական նորանոր, որ պապը կընդունէր դա-
ւանկալով: Կնոյք:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսի «Ստամբուլ» թիւքը քաղաքում տպված
է հետեւեալ պատմութիւնը: «Մի քանի տարի ա-
ռաջ, «Daily News» քաղաքի յայտնի թղթակից պ.
Օդոնովան, Մէլբուրնի կաթողիկոսի վերադառնալու
ժամանակ, թիւքիստում սիրահարվեց մի 13-ամեայ
ուսուցչուհի հայ գեղեցկուհու. վրա: Հարաւային ա-
րեւելի տալի, խաղաղի և նաև երկրում, սառն
անդիպային սաստիկ սիրահարվեց: Նա յայտնեց
իրան աղջկայ փեսացու, որի մասին թիւքիսի
հիւպատոսարանի մէջ պաշտօնական ակա կազմ-
վեցաւ: Բայց որովհետեւ, տեղական օրէնքներով,
պատկարովի չէր կարող կատարվել մինչև
նորահարսի չափահասութիւնը, այդ պատճառով
պ. Օդոնովան կամեցաւ օգուտ քաղել այդ ժամա-
նակից և տալ աղջկան օրինաւոր կրթութիւն: Այդ
միտքը շատ հաճելի եղաւ նորահարսի ծնողներին
և ինքն փեսացուն յամենց աղջկան տեղական
պանդիօններից մէկին: Սակայն «Daily News»,
քաղաքի խմբագրութիւնը թախանձանքով հրաւի-
րում էր իր անունի թղթակցին շտապել Եգիպ-
տոս: Մանր էր իրենդայու համար բաժանվել իր
նշանածից. ճանապարհ ընկնելուց առաջ շատ ըն-
ծաներ գրեց նրա համար, իսկ ինքը որպէս յիշա-
տակ վերցրեց աղջկայ լուսնակար մեծ պատկերը,
որ հանված էր Լիդիական Օմֆալա թաղաւոր
գերում, որի տանիքի մօտ Հէլլոպոլիսի փոխանակ
հաւատարմ սարակի գերբով պատկած էր ինքն
Օդոնովանը: Երկու և կէս տարի նա ուղարկում
էր բաւականին փող իր սիրեցեալին նրա կրթու-
թեան և ապրուստի համար, բայց ահա 18 ամսից
աւելի է, որ թիւքիստում նրանից ոչ մի տեղեկու-
թիւն չէ ստացվում: Վերջին անգամ սիրահարված
իրանդային, որպէս թղթակից, ուղեկցում էր
Գիկս-փաշայի զօրաբանին գէտի Սուլան և այդ
ժամանակից նրա մասին ոչ մի խօսք չէ լսվում:
Երբեք չէ, սպասվում է նա, թէ գեր վերցրած:
Այն ինչ Օդոնովանի հարանցուն այժմ արդէն 17
տարեկան է և նա գեղեցիկ, կրթված աղջիկ է,
որին պատրաստ են առաջարկել իրանց սիրտը
շտապել թիւքիսի աչքի ընկնող երիտասարդներից:
Սակայն, աղջկայ ծնողները, նախ քան իրանց հա-
մաձայնութեան տալ տեղացիներին շահաւէտ ա-
ռաջարկութիւններին, ցանկանում են աւելի ճիշդ
տեղեկութիւններ ունենալ Օդոնովանի վիճակի
մասին և այդ նպատակով աղջկայ աղբակամներից մէ-
կը ներկայ ժամանակ հասաւ թիւքիսից Կ. Պօ-
լս, որ անդիպական դեսպանութեան միջոցով
տեղեկութիւններ է հաւաքում կորած փեսացուի
մասին»:

Անգլիական քաղաքի Գեորգ Հարվիստը, ինչ-
պէս ասում են, իր ժամանակի ամենամոտացկոտ
մարդն է եղել: Երիտասարդ ժամանակ նա պատ-
րաստվեցաւ պատկվելու, բայց հարսանքը չը
կայացաւ, որովհետեւ նշանակեալ ժամին փեսացուն
գնացել էր ձուլն որսալու և մինչև գիշերը չէր
վերադարձել տուն: Ձմորութիւնը նրա ամենա-
սիրելի առարկան էր: Նրա պատճառով նա շատ
անգամ ուշանում կամ ըրորովին չէր գալիս իր
պաշտօնը կատարելու: Նրա գրգռանքները միշտ լի-
քն էին լինում ձմորական պատկանելիքներով:
Մի և նոյն ժամանակ նա զիտակում և խելացի
մարդ էր և նրա ընկերութիւնը թանկ էին գնահա-
տում շատ բարձրաստիճան անձինք և ի միջի այ-
լոց լուր (Մայրոն, որը մի անգամ հրաւրեց նրան
կալէ գնալու: Նրանք գնացին Կալէ շրջակայքը
նայելու և մեր գիտնական քաջաման ետ մնալով
իր ուղեկիցներից, մոլորվեցաւ ճանապարհից: Նա
ոչ մի բառ չը գիտէր ֆրանսերէն, թէն գիտէր
որ իրանք ինչանիւ էին «Ոսկի առիւծ» կոչված
պանդիօնում: Ինչպէս անէր, որ այնտեղ տանէին
իրան: Նա դրեց արծաթեայ դրամը բերանում և
չորեքթիւն դառնալով մոնչից սուլվել պէս: Պա-
տահող զինուորները խելագար համարելով նրան,
ներկայացրին իշխանութեանը, որտեղ քաջաման
կարողացաւ յայտնել իր միտքը: Շատ անգամ
պատահում էր, որ նա եկեղեցին էր մտնում կար-
թի կամ հրացանը ձեռին: Ճաշի ժամանակ նա
միշտ զինել էր խուր, եթէ միայն գրված լինէր
սեղանի վրա: Մի անգամ լուր (Մայրոն) հետ
թայլով գետի վրա դրոնակի, Հարվիստը ոգևոր-
ված ասում էր յո՛ւնական բանաստեղծների գրված-
ներից կտորներ և այնքան յափշտակված էր, որ

չը նայելով փողբիկ մակուկին և խոր գետին, վեր
թուռ տեղից և սկսեց շարժել իր ձեռքերը: Մին-
չև որ լուրը կը գգուշացնէր նրան, նա ընկաւ
ջուրը և ընդունեց անժամանակ սառն բաղանիք:

Մի այլ անդիպական քաջաման Բորէտտ անունով,
որ շատ նշանաւոր անձնաւորութիւն էր Սկով-
տիայի քաջամանների մէջ, նոյնպէս սաստիկ մոտաց-
կոտ էր: Մի անգամ նա մոտա փոստատուի և
հարցրեց նամակ կնչ իր անունով թէ ոչ:—Թող
տուէր իմանալ ձեր աղբանունը, հարցրեց նրան
փոստատան կառավարիչը: Բորէտտը սաստիկ չը-
փոթվեցաւ, որովհետեւ բոլորովին չէր կարող մը-
տաբերել իր աղբանունը և յուսահատութեամբ նա-
յում էր իր շուրջը, կարծես մի երբ որոնելով իր
գրութիւնից: Ուրախութեամբ նա տեսաւ, որ ծա-
նօթներէն մէկը անց է կենում և շտապով կան-
չեց նրան:—Ողջմիտ:—Օրհնաւ տէր, քաղաքակա-
րութեամբ պատասխանեց ծանօթը:—Ո՛չ, այդ չէ,
այդ ևս էլ գիտեմ... Ինչպէս է իմ անունը:—Միտ-
տէր Բորէտտ, պատասխանեց զարմացած ծանօթը
և աղատեց խեղճ քաջամանին:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԵՐԻԿԱՆԿԱՆ ՍՊԵՏԱԿԵՂԷՆ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԵՔԵՆԱՅ

Այդ մեքենայով լուսնալու ժամանակ
սպիտակեղէնը աւելի երկար է պահվում,
որովհետեւ կտաւը կտաւին չէ քսվում, որից
սովորական լուսնային ժամանակ կտաւը բա-
րակում է և պատռվում: Մի անգամ լուս-
նայով, լուսնային կատարեալպէս մաքուր է
ստացվում, հետեւապէս շատ քիչ սապոն և
փառելիք է գործարկվում: Աշխատանքն էլ
շատ հեշտ և արագ է կատարվում, այնպէս
որ երեք անգամ քիչ աշխատող ձեռք է
պահանջում: Մեքենան բաղադրեալ չէ և
շատ ամուր է: Նա միակերպ օգտակար է
ինչպէս մեծ և փոքր ընտանիքների համար,
նոյնպէս և լուսնաբարձների համար, խրատ-
ները մանրամասն: Գործակալներ են հրա-
ւիրվում: Ճանապարհաճախով ԳԻՐԳ 5
բուր: Հասցէն: Агенты В. ПЛЕМЕН-
ЗОНУ, ВЪ СИМФЕРОПОЛЕ.

5—5 (1)

ՄԱՍՆԱՐ ՀԻՄՆ- ԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻԱ, ՎՈՐՕՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԳԵՊ)

Հիւանդները ամեն օր ընդունվում են.
Առաւօտան 9—12½ ժամ: ՆԱԽԱՍԱՐ-
ԴԵՆԱ—վերաբուժական, վերականգն և ա-
տամի ցաւերի:
10—10½ ժ. ԲՈՒԳԻՎՈՎԱԿԻ—մանկական և
ներքին ցաւերի:
10½—12½ ժ. Կին—բժշկ ՇՄԻՏՑ—
կանանց, ներքին և աչքի ցաւերի:
10—11 ժ. (Կիրակի, չորեքշաբթի և
ուրբաթ) ԲԻՅՈՒ—աչքաբուժի:
11½—12½ ժ. (Երկուշաբթի), ԲԱՐԱՆ-
ՅԵՆԱ—ներքին և ջղային ցաւերի:
Երեկոյեան 5½—6½ ժ.—ՆԱԽԱ-
ՍԱՐԴԵՆԱ—ամեն օր:
ԲԱՐԱՅԵՆԱ և ԲՈՒԳԻՎՈՎԱԿԻ—չորեքշաբ-
թի և շաբաթ:
Համախորհուրդ (Հիւանդանոցի բու-
րը բժշկներին)—չորեքշաբթի և շաբաթ—
6½—7½ ժամը երեկոյեան:
Հիւանդանոցը ունի սննդանոցի հիւան-
դների և ծննդկանների համար: Երթեկե-
հիւանդները վճարում են խորհրդի համար
50 կ.: Հիւանդանոցի բոլոր բժշկների հա-
մախորհրդի (կոնսիլիում) համար 3 մա-
նէթ: Չ. քաւորները անվճար:
Հիւանդանոցի վերահսկող ՆԱԽԱՍԱՐԴԵՆԱ

Ներսիսեան Հայոց Ազգային հոգևոր
գործունեւոր հոգաբարձական խորհրդարա-
նի մէջ, Ապրիլ ամսից 18-ին, երեկոյեան 8
ժամին կը լինի երկրորդ անգամ աճուրդ

(առանց կրկնաձուլման) կապարով տալու նշան
դարձանցի կալուածքը,—ա, տուն և կը-
պակներ, ընծայած հանգուցեալ Աւետիք
Փիլոյեանցից, որ գտանվում են Սուրբատակի
անուանված փողոցումը № 6 և 11, և
բ. 21 կրպակներ, որք գտանվում են ու-
սումնարանապատկան հրապարակի վրա վա-
նաց աւագ եկեղեցւոյ մօտ: Պայմանա-
թուղթը կարելի է կարգալ հոգաբարձա-
կան դիւանատան մէջ ամեն օր (բացի կիւ-
րակէից և տօներից) ցերեկվայ 10-ից—12
ժամ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Պ. Արմենակ Սիւնիի հեղինակութեամբ
«ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԾ-
ՐԵԼԻՆԵՐ»

Վերնագրով դրբոյկը կաթողիկոսական եօթը
ընտրելիներ (Ներսէս, Խրիմեան, Մելքիսե-
դէկ, Նսայի, Յարութիւն, Բարդուղիմէոս և
Մակար եպիսկոպոսներ) կենսագրական տե-
ղեկութիւններով: Գինէ 15 կ: Ծախվում է
Թիֆլիսում—Կենտրոնական և Կովկասեան
գրաւաճառանոցներում և պ. Շահվերդեա-
նի պալիլիօնում:

Երևան—«Другъ-дѣтей» գրաւաճառա-
նոցում, Բաղու—Մերաբովի և Աղարունովի
ծխախոտի մագազինում, պ. Զախարովի
քարավանարայում: Գանձակ հայոց ուսում-
նարանի ուսուցիչ պ. Գէորգ Ղարաջեանի
մօտ: Ալեքսանդրապոլ—տեղական գրաւաճա-
ռանոցում:

Մի և նոյն տեղերում վաճառվում է և
«Հայաստանի սովը և Էջմիածին» դրբոյկը,
Էջմիածնի և սովատանջների պատկերներով:
Գինն է 20 կ:

Ուրիշ տեղերից կարող են գիմել հետեւեալ
հասցէին. Вѣ Тифлисъ, на Обществен-
ной улицѣ. № 11 Мнацакану Бегла-
рянцу.

ԲԱՅՅԻ

«ՋԱԼԱԼԵԴԻԻՆ»

տպւած է հեղինակի պատկերով

ԳԻՆՆ Է 1 ԲՈՒԲԸ

Թիֆլիսում վաճառվում է

Հեղինակի մօտ,—«Կենտրոնական գրաւա-
ճառանոցում»,—Կովկասեան գրաւաճառա-
նոցում:—Շահվերդեանի պալիլիօնում, —
Շահինեանցի և Տէր-Յովսէփեանցի ծխախո-
տի մագազիններում:

Օտարաքաղաքացիք պէտք է գիմեն հե-
ղինակին այդ հասցէով.

Тифлисъ. Редакція „Мшакъ“.

2—20

ԹԷՅ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՆՁԻ այս
տարի չափազանց ԳՈՅՆԱՌՐ
ԵՒ ՀՈՏԱԻՏ: Այդ թէյից ստացված
է ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ
50,000 ՖՈՒՆՏ և ծախվում է 25%
էժ.ԱՆ քան թէ ուրիշ տեղ, այսինքն լաւ
40ՏԳՈ թէյ 1 ր. 10 կ. մինչև 1 ր. 2-
կ., շատ լաւ 40ՏՖԱ թէյ 1 ր. 40 կ., դե-
րագանց ՄՕՆԵԴԳ թէյ 1 ր. 60 կ. (այս

թէյը ամեն տեղ ծախվում է 2 ր. և 2 ր.
50 կ.), ԿԱՍԱՌԻ թէյ 1 ր. 80 կ. և ամե-
նալաւ ՖՈՒՆՏԵ-ՖՈՒՆՏԻ թէյ 2 ր. Փունտը
քարշը առանց թղթի: Նոյն տեղը սովորա-
բար լինում է 500 ԵՐԿԱԹԷ ՄԱՀԱՅԱՆՆԵՐ
6 ր.—60 ր.: ՎԵՐԱԿԱՆԳՆԱԳ մազերի հա-
մար: Երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Կովկասի
համար, շօխաղ ՖՐԱՅ, շէֆիլդի ԳԱՆԱԿ-
ՆԵՐ, հրացաններ ԳԱՌԻ, ԲԷՐԼԻՆԵՐ ՎԷՐ-
ԼԻ, ԲԱՐՆԵԻԹԻ թամբեր, ՇՎԱՐՑԻ ալբոմներ:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ դան-
վում է Թիֆլիսի մէջ, Գփօրցովի փողոցի
վրա Արծրունու գալէրէում № 156
57, 158, 159, 160: Նոյն տեղը մեծ քա-
նակութեամբ երեսնաւոր և տղամարդկանց
մահճակալներ 25% էժան քան թէ ուրիշ
տեղ 10% էլ զիջումն: 20—100

2,000

ամենից ՀՈՉԱԿԱՆ ԲԺԻՆԻՐ
վկայում են և խորհուրդ են
տալիս

ԴԿ. ՊՕՊՊԻ

ԳՏԱՄ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

երանը և ատամները պահպանելու այժմ գո-
յութն ունեցող որպէս ամենալաւ միջոցներ:
30 տարվայ ընթացքում փորձված

**ԱՆԱՏԵՐԻՆԵՆԱՆ ԲԵՐԱՆ
ՈՂՈՂԵԼՈՒ ԶՈՒՐ**

ԴԿ. Ի. Գ. ՊՕՊՊԻ ՎԻԷՆՆԱ-
ՅՈՒՄ,

աւտորական պարտական ատամնաբոյժի,
ուչնացնում է ատամնաբուժական բժշ-
կում է հիւանդ ընդերքը, պահպանում
է մաքրում է ատամները, ոչնչացնում է
վատ հոտը, թնթեացնում է մանուկների
ատամները բուսնելը, պահպանում
միջոց է դէֆտէրիտի դէմ, անհրաժեշտ
է հանրային ջրեր գործածելու ժամանակ: Մի-
շիւք արժէ 1 ր. 50 կ., ինչ քիչ 1 ր. և 1/3
շիւք 60 կոպէկ:

Ատամային փոշի խոտերից, արդէն
կարճատեւ գործածութեանց յետոյ ա-
տամները կատարելապէս սպի-
տակացնում են, չը փչացնելով նրանց:
Խաղաղանքի կարգից գինը 70 կ:

Ատամային օժանելի պատտա-
պակէ կարգանքում 1 ր. 20 կոպ.,
վարձված միջոց է ատամները մաքրելու
համար:

Ատամի անուշահոտ պատտա-
բերանի ներքին մասը և ատամները ա-
ռողջ պահպանելու համար, մի կտորը
արժէ 35 կոպ.:

Ատամային պլումբա ամենաու-
ղիւղ միջոցը դատարկ ատամները անձնա-
պէս պլումբելու համար: Փոքրիկ կարթ-
կայի գինն է 2 րուր:

ՊՕՊՊԻ ԽՈՏԻ ՍԱՊՈՆ

որդներին, բշտիկներին, երեսի բծերին, երանդ-
ներին, կոշտ մազերի և բուռնների, քոտի,
ընդհանրապէս կաշու հիւանդութիւնների և
անմաքրութիւնների դէմ:

Ծախվում է Թիֆլիսում դեղատան աղ-
բանքների աւետարկ Կովկասեան ընկերու-
թեան մէջ: (2.—1)

**ՄԵՏԱՔԱՍՅԻՆ ԲՈԺՈԺՆԵՐԻ
ՍԵՐՄԵՐ**

Գեղին կօկոններին տեսակից, պատրաստ-
ված է Պատմօրի սխառնայով և ստացված
է Ֆրանսիական աւաճառարէ ֆիրմաներից:
Մտալի գինը մի րուրի է: Կան նոյնպէս
Նուրու տեսակից պատրաստված սերմեր—
միւսայը 50 կոպէկով: Գիմել հետեւեալ հա-
ցէով: Պ. Լէրիսէին, Ֆրէյլինայայ փողոց,
№ 8, տուն Արտաղովի, կամ Լուի մազա-
զինումն: 5—5

Ա Ն Ի

ՊԱՀԼԱՌՈՒՆԻ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՔԱՆԴԱԿԱԳՐՈՐԾ ՊԱՀԱՏԻ ԱՆԵՐԱԿԸ

ՇՐՋԱՆԱԿԻ ՄԷՋ ՁԵՏԵՂԵԼՈՒ ՊԱՏԿԵՐ

ԳԻՆՆ Է 50 ԿՕՊԷԿ

Լուսափորագրից Յ. Բիւրքճեանի լուսանկարից վիկտոր Անդերէր—գեղարուեստից
լուսանկար Աւստրիոյ կայսերական պալատի:

Վաճառվում է Կենդրոնական գրաւաճառանոցում և պ. Եփրեմ Ծատուրեանի
լամպայի մագազինում Թիֆլիսում: 1—3

„Ա Ղ Բ Ի Ի Ր“

Լոյս տեսաւ № 4 (Ապրիլ). օտարաքաղաքացիներին ուղարկել է ամսոյս 6-ին, իսկ
Թիֆլիսում բաժանվել է 7-ին երեկոյեան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 4

Բրիտոս յարեաւ ի մեռելոց Ա. Տ.
Երբող. Լեռնոյ
Առ Արևն Ղ. Աղայեանց
Պարոյր Հայկազն (Շարունակութիւն) Բաֆֆի
Գարուն է եկել Ջատիկն է հասել Յ. Ճաղարեկեան
Հակայ-Մըշիւն (Շարունակութիւն) Թարգ. Տ. Գիւզալեանց
Ջնծաղիկ Սրինգ
Ոսկու կոոր. Ս. Քամալեանց
Կեանքի կաթիլը (Ի. Տուրքենեովից) Թարգ. Ա. Մեհրաբեան

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Էլէքտրականութիւն III. Ն. Արեւանց
Օղը և նրա յատկութիւնները Յ. Զոհրաբեանց

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Սաթինին ու Գարեգինը Միլիք
Վարդենին ու Փնինը }

ԶՈՒՄԱՃԱԼԻՔ

Թուարանական խնդիրներ: Զինվորապալի փորձանքը: Հանելուկներ: Ազգականներ:
Մի խնդիր. Ա. Սարգսբեանց
Նախընթաց № 3-ի մէջ եղած հանելուկների և բերանների բացատրութիւնները:

«Աղբիւր» այն բաժանորդները, որոնք դեռ չեն վճարել իրանց բաժանորդագինը, խնդրում ենք
բարեհաճեն շուտով հասցնելու, հախառակ դէպքում հետեւեալ համարից կը դադարեցնենք նրանց
«Աղբիւր» ուղարկելը:

Ա Ն Ե Ր Ա Կ Ք

Ա Ն Ի

ԼՈՒՍԱՆԿԱՐԵՑ Յ. ԳԻՐԲՔՃԵԱՆ

Խշիւնական և Թագաւորական պալատների, ամրոցների, եկեղեցիների, մահար-
ձանների... 40 հատ ստեղծակողական լուսանկար տեսարաններ: Նուրբ խնամքով
պատրաստուած, ամփոփված գեղեցիկաչէն պահարանի մէջ, հայերէն, ռուսերէն,
գաղղիերէն և գերմաներէն բացատրութեան տեսարաններով:

ԱՐԺԷ 20 ԲՈՒԲԸ

Գիմել Կենդրոնական գրաւաճառանոց Թիֆլիսում

Ստեղծակող պատկերները սովորական պատկերներից այն առաւելութիւնն
ունին, որ տեսարանները աւելի բնական են ներկայացնում և այնքան կենդանի
տպաւորութեամբ, որ նայողին թուում է թէ ինքը բուն իսկ տեսարանի մէջ
է գտնվում:

Ուսումնարանները կարող են մաս առ մաս վճարել: 12 րուրի սկզբում, իսկ
մնացեալ 8 րուրին 6 ամսուայ ընթացքում:

Անիի ստեղծակող պատկերներից շատ քիչ օրինակներ են մնացել, ապակի-
ներն (նիզատիւններն) իսպառ ոչնչացած են: 1—3

ՍՏԱՄՈՒՔԱՍՅԻՆ ՑԱՒԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ“

Այս գինն շատ համեղ է և 25 տարիների ընթացքում աշողութեամբ գործ է
զրկում հետեւեալ դէպքերում: ԱՌՈՐԺԱԿԻ ԲԱՅԱԿԱՑՈՒԹԻՒՆ, ՍՏԱՄՈՒՔՍԻ ՑԱ-
ԻՆԻ, և ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐԱՊԱՌԹԻՒՆ:

Պէպսին «Բուլօ» ճանաչված է ֆարիզի բժշկական Ակադէմիայից և ստացել
է առաջին մեդալներ հետեւեալ աշխարհաճանդէաներին՝ ՓԱՐԻՋԻ 1867 թ., ՎԻԷՆՆԱՅԻ
1873 թ. ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ 1876 թ. ՓԱՐԻՋԻ 1878 թ.:

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.
Կովկասի համար պահեստ. ԳԵՂԱՍՏԱՆ ԱՊՐԱՆԳՆԵՐԻ ԱՌԵԻՏՐԻ ԿՈՎԿԱՍՈՒՄ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ:

11—80 (և. շ.)

ՍԻԳԱՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ա. Գ. ՏՕ ՊԷՐԻ

Ս. Պետերբուրգի մէջ: Զերինշեով պերէուլօի, № 4: Սիգարներ շատ լաւ
յատկութեան 1 րուրէլուց մինչև 16 րուրէլ հարիւրը: Կարելի է լա-
տանալ Ռուսաստանի ծխախոտների բոլոր խանութների մէջ:

11—12